ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի եւ Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովի միջեւ համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը եւ Ֆրանսիայի Հանրապետության Ազգային ժողովը՝

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության եւ Ֆրանսիայի Հանրապետության միջեւ 1993թ. մարտի 12-ին Փարիզում ստորագրված Համաձայնության, բարեկամության եւ համագործակցության պայմանագիրը, մասնավորապես 10-րդ եւ 11-րդ հոդվածները,

հաշվի առնելով Հայաստանի եւ Ֆրանսիայի ավանդական բարեկամության հարաբերությունները,

ձգտելով ընդլայնել երկու խորհրդարանների միջեւ եղած հարաբերությունները եւ փորձի փոխանակումը,

ցանկություն հայտնելով, որ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի եւ Ֆրանսիայի Ազգային ժողովի միջեւ համագործակցությունը գալիք տարիների ընթացքում կարեւոր զարգացման ընթացք ստանա,

համաձայնվեցին ներքոշարադրյալի մասին:

1. Կողմերը ձգտում են ընդլայնել համագործակցությունը երկու խորհրդարաններում ստեղծված բարեկամության խմբերի միջեւ եւ նրանց դերը միջխորհրդարանական գործնական հարաբերությունների ապահովման համար:

2. Միջխորհրդարանական համագործակցությունը կարտահայտվի նաեւ պատգամավորների եւ պաշտոնյաների փոխադարձ այցերով, երկու խորհրդարաններին անհրաժեշտ հրապարակումների ուղարկումով եւ տեղեկատվության փոխանակմամբ:

3. Պատգամավորների փոխադարձ այցերը կարող են իրականացվել յուրաքանչյուր խորհրդարանում ստեղծված բարեկամության խմբերի շրջանակներում, ինչը գերադասելի միջոց է հանդիսանում երկու խորհրդարանների միջեւ գոյություն ունեցող համագործակցության զարգացման համար:

4. Տեխնիկական օգնության առաքելություն կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կարիքներից ելնելով, եւ Ազգային ժողովը կարող է ստաժավորման համար ընդունել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտոնյաներին:

5. Երկու խորհրդարանները պարբերաբար իրականացնում են հրապարակումների փոխանակում փոխադարձ համաձայնության պայմանների համաձայն:

Կատարված է Փարիզում, 1993թ. մարտի 9-ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը հայերեն եւ ֆրանսերեն , երկու տեքստերը համազոր են: